



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝	Արևիկի միջնակարգ դպրոց
Առարկա՝	Մաթեմատիկա
Թեմա՝	«Ձևավորող գնահատումը մաթեմատիկա առարկայից ըստ առարկայական չափորոշչի»
Վերապատրաստող, մենթոր՝	Դավիթ Վարժապետյան
Ուսուցիչ՝	Մելանյա Գրիգորյան

2022թ.

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1. Ձևավորող գնահատման նպատակը, սկզբունքները, տեսակները և գործիքները.....	5
Գլուխ 2. Ձևավորող գնահատման բաղադրիչները.....	7
Գլուխ 3. Ձևավորող գնահատման իրականացումը մաթեմատիկա առարկայից ըստ առարկայական չափորոշի.....	10
Եզրակացություն.....	22
Օգտագործված գրականության ցանկ.....	24

Ներածություն

Նպատակը և հետազոտական հարցը:

Հետազոտությունը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների չափորոշով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման: Ծնողներին և աշակերտներին իրազեկ պահել նոր ՀՊԶ-ով գնահատման օրինաչափությունները մաթեմատիկա առարկայում:

Հետազոտական աշխատանքի մեջ ամենայն մանրամասնությամբ ներկայացնելու էմ գնահատման համակարգի փոփոխություններին, ձևերին, տեսակներին և սկզբունքներին:

Թեմայի կարևորությունը և նշանակությունը:

Մարդկանց՝ հատկապես աշակերտներին տեղյակ պահել գնահատման չափորոշային պահանջներին: Ինչպե՞ս իրականացնել չափորոշային պահանջներին համապատասխան գնահատումը մաթեմատիկայի դասընթացում:

Գնահատումն ուսուցման արդյունքների չափման գործընթացն է, այն որոշում է սահմանված պետական չափորոշի հիման վրա կազմված առարկայական ու դպրոցական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի պահանջների մակարդակը:

Գնահատման հիմնական նպատակն է սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման մակարդակի ստուգումը, արժեքային որակների

բացահայտումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործումն ու ուսուցման որակի վերահսկման ապահովումը:

Ձևավորող գնահատումը տեղեկատվություն հավաքելու անընդհատ գործընթաց է ուսուցանելու ընթացքի, ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, որն օգնում է ուսուցչին վերանայել դասընթացի պլանավորումը և իր կարծիքն է հայտնում սովորողների

առաջադիմության մասին: Ձևավորող գնահատման ուժեղ կողմն այն է, որ նպաստում է ուսուցման բարելավմանը, իսկ թույլ կողմն այն է, որ կախված է պատասխան արձագանքի բնույթից: Արձագանքն արդյունավետ է, երբ սովորողը հակված է նկատելու, ուշադիր, շահագրգիռ լինելու: Առանց հայտորոշմանը ուսուցիչը չի կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և աշակերտը ազդեցություն ունեն կրթության որակի բարելավման վրա: Գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է: Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ աշակերտի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն աշակերտին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է ստանալիս աշակերտների ձեռքբերումների և դժվարությունների մասին:


Օգտագործված մեթոդները, գործիքները-Դասախոսություն, իրազեկում, աշակերտների և ծնողների հետ հարցազրույցներ:

Գլուխ 1. Ձևավորող գնահատման նպատակը, սկզբունքները, տեսակները և գործիքները:

Ձևավորող գնահատումը տեղեկատվություն հավաքելու անընդհատ գործընթաց է ուսուցանելու ընթացքի, ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, որն օգնում է ուսուցչին վերանայել դասընթացի պլանավորումը և իր կարծիքն է հայտնում սովորողների առաջադիմության մասին:

Ձևավորող գնահատման ուժեղ կողմն այն է, որ նպաստում է ուսուցման բարելավմանը, իսկ թույլ կողմն այն է, որ կախված է պատասխան արձագանքի բնույթից: Արձագանքն արդյունավետ է, երբ սովորողը հակված է նկատելու, ուշադիր, շահագրգիռ լինելու:

Առանց հայտորոշմանը ուսուցիչը չի կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա:



Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և աշակերտը ազդեցություն ունեն կրթության որակի բարելավման վրա: Գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է: Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ աշակերտի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն աշակերտին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին), որպեսզի հնարավորություն ունենա անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները: Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում աշակերտների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Գլուխ 2. Ձևավորող գնահատման բաղադրիչները

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում:

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Մոլորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:



Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի

բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

- ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,
- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
- ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Գլուխ 3. Ձևավորող գնահատման իրականացումը մաթեմատիկա առարկայից ըստ առարկայական չափորոշի

Ինչպե՞ս իրականացնել չափորոշային պահանջներին համապատասխան գնահատումը մաթեմատիկայի դասընթացում:


Գնահատումն ուսուցման արդյունքների չափման գործընթացն է, այն որոշում է սահմանված պետական չափորոշի հիման վրա կազմված առարկայական ու դպրոցական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի պահանջների մակարդակը:

Գնահատման հիմնական նպատակն է սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման մակարդակի ստուգումը, արժեքային որակների բացահայտումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործումն ու ուսուցման որակի վերահսկման ապահովումը:

Գնահատման հիմնական սկզբունքներն են.

- արդարացիությունը
- մատչելիությունը

- օբյեկտիվությունը
- թափանցիկությունը
- հավաստիությունը



Գնահատման ձևերն են՝ միավորային գնահատում և ձևավորող (ուսուցանող)

Միավորային գնահատումն ունի սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկող դեր: Դրա նպատակն է թվանշանների միջոցով գնահատել, ուսումնական գործընթացում աշակերտի ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշիչով ու ծրագրով: Գնահատման այս ձևը ունի կրթության որակը վերահսկող դեր:

Միավորային գնահատումը ունի «մրցակցային» բնույթ: Ստացած միավորների միջոցով աշակերտները համեմատվում են մեկը մյուսի հետ:

Միավորային գնահատման իրագործման տեսակները՝

1. բանավոր հարցում
2. գործնական աշխատանք
3. թեմատիկ գրավոր աշխատանք

Միավորային գնահատման նպատակով կարելի է օգտագործել կարճաժամկետ թեմատիկ աշխատանքներ նաև տնային առաջադրանքներ՝ որպես բանավոր հարցումներ:

Տարբեր բաղադրիչներով միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկերացում կազմել սովորողի մասին: Դրանով բացահայտվում են աշակերտի տարբեր կարողությունների և հմտությունների տիրապետման աստիճանները: Այդ դեպքում սովորողին պարզ են դառնում նրա գործունեության թերի և հաջողված կողմերը, որը օգնում է սեփական թերությունները վերացնել:

Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջներին աշակերտի համապատասխանության աստիճանի մասին:

Բանավոր հարցման միջոցով ստուգվում են աշակերտի ոչ միայն մտապահման վերարտադրության ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրացման, վերարտադրության, համագործակցության, մոդելավորելու կարողունակություններ:

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ չափանիշներով:

1. ակադեմիական գիտելիքի իմացության,
2. կիրառելու կարողություն,
3. ներկայացնելու կարողություն,
4. սխեմաներ կազմելու կարողություն,
5. միջառարկայական և վերառարկայական կապեր տեսնելու կարողություն:

Թեմատիկ աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքն միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր:

Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով:

Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել բանավոր կամ գործնական:

Առաջադրանքները կարող են տրվել թեստերով, որոնցում ներառված են՝ ծրագրում առկա տարաբնույթ առաջադրանքներ.

- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,
- ապացուցում պահանջող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- բաց թողածը լրացնելու պահանջով,
- համապատասխանեցման պահանջով,
- պատասխանի ընդարձակ շարադրմամբ:

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, ինչպես նաև դժվար, որոնք պահանջում են նյութի խորքային իմացություն, անձանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն և հմտություն:

Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են 10 միավորային համակարգով:

Գնահատման «10» միավորային սանդղակ.

Միավոր	Անվանումը
--------	-----------

10	«Բացառիկ»
9	«գերազանց»
8	«շատ լավ»
7	«լավ »
6	«միջինից բարձր»
5	«միջին»
4	«բավարար»
3	«անբավարար»
2	«վատ»
1	«շատ վատ»

Գործնական աշխատանք և կիրառություններ

Գործնական աշխատանքը աշակերտի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների ինչպես նաև չափիչ սարքերի կամ համակարգչի գործնական կիրառություններն են:

Գործնական աշխատանքի նպատակներն ու խնդիրներն են՝

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Կատարած գործնական աշխատանքի համար սովորողները գնահատվում են միավորներով:

Գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում.

- տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարների ու փաստերի ըմբռնման աստիճանը,
- նորովի կամ ստեղծագործական մոտեցումը,

- առաջադրանքի համար անհրաժեշտ գծապատկերներ, հաշվարկներ կատարելու կարողությունը,
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

Աշակերտներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

1. հարցադրումների դիտարկումների միջոցով տվյալների հավաքում օգտագործում աղյուսակների և գծապատկերների տեսքով,
2. մոդելների, ձևանմուշների և մանրակետերի պատրաստում,
3. դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր),
4. լաբորատոր աշխատանքների կատարում,
5. երևակայական փորձեր:

Ձևավորող գնահատումը խթանում է սովորողի՝ սեփական կրթության նկատմամբ պատասխանատվության ստանձնումը: Ձևավորող գնահատման տարբեր գործիքների կիրառմամբ ապահովվում է սովորողներգրավումը ուսումնական գործընթացում:

Ձևավորող գնահատման միջոցով ուսուցիչը և սովորողը միասին պարզում են, թե որտեղ են իրենք գտնվում և ինչ պետք է անեն նպատակին հասնելու համար:



Ներկայացրել եմ մաթեմատիկայի ծրագրային դասընթացից հատված, որի ընթացքում օգտագործել եմ ձևավորող գնահատում՝ օգտվելով ջերմաչափման մեթոդից:

Բաց դասի ծրագիր

Դաս՝ համակարգչային տեխնիկայի կիրառմամբ

Առարկան՝ մաթեմատիկա

Դասարանը՝ 2-րդ

Դասի թեման՝ Երկնիչ թվերի գումարումն ու հանումը սյունակով (առանց կարգային անցման)

Դասի բնույթը՝ նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը.

1. Ամրապնդել երկնիշ թվերի գումարման և հանման վերաբերյալ արդեն ունեցած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:
2. Ներկայացնել երկնիշ թվերը սյունակով գումարելու և հանելու հաշվեկանոնը (առանց կարգային անցման):
3. Ձևավորել կիրառական պարզագույն խնդիրներ լուծելիս թվերն ու մեծություններն օգտագործելու կարողություններ և հմտություններ:
4. Ձարգացնել սովորողների տրամաբանական մտածողությունը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները:
5. Խթանել սովորողների ինքնուրույն մտածողությունը:
6. Մեծացնել հետաքրքրությունն առարկայի նկատմամբ:

Սովորողի ուսումնական ակնկալիքները.

Կիրառի երկնիշ թվերը սյունակով գումարելու և հանելու հաշվեկանոնը վարժություններ և խնդիրներ լուծելիս:

Դասի կահավորումը`

1. համակարգիչ, պրոյեկտոր և մեծ էկրան,
2. քարտեր` առաջադրանքների կատարման համար և այլ անհրաժեշտ պարագաներ:

Դասի ընթացքը.

1. Բանավոր հաշիվ

2. Նոր նյութի հաղորդում
3. Խնդրի լուծում
4. Դասի ամփոփում և գնահատում
5. Տնային աշխատանքի հանձնարարում

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դասարանի սովորողները նախապես բաժանված են խմբերի. յուրաքանչյուր խումբ նստում է մեկ սեղանի շուրջը:

Դասի ընթացքում օգտագործում են ձևավորող գնահատման հետևյալ մեթոդը՝

Ձերմաչափում

Այս մեթոդը նպատակ ունի բացահայտելու, թե սովորողները որքանով ճիշտ են կատարում հանձնարարությունը: Աշխատանք կատարելու ընթացքում մի պահ դադար է տրվում. հարցնում են. «Ի՞նչի վրա էիք աշխատում»: Յուրաքանչյուր սովորող ներկայացնում է այն աշխատանքը, ինչը ինքը մինչ այդ պահը կատարել է: Պարզ է դառնում, թե սովորողները որքանով են հասկացել հանձնարարությունը կամ դրա կատարման ընթացքը:

Չույգերով կամ խմբերով աշխատելու պարագայում դիմում են որևէ գույգի կամ խմբի՝ ասելով, որ ցուցադրեն իրենց աշխատանքի ընթացքը: Մյուս գույգերը կամ խմբերը դիտում են և հասկանում, թե իրենցից ինչ է պահանջվում կատարել: Այս մեթոդը շատ կարևոր է, քանի որ փորձը ցույց է տվել, որ սովորողների մեծ մասը առաջադրանքը կատարելիս դժվարություններ է ունենում ոչ թե այն պատճառով, որ թեման չգիտի, այլ չի հասկանում առաջադրանքի պահանջը, ուսուցչի հրահանգը կամ կատարման ընթացքը: Խորհուրդ է տրվում հաճախակի կիրառել այս հնարը, որը ժամանակատար չէ և նպաստում է աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Մտածողությունն ու հիշողությունը ակտիվացնելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու նպատակով սովորողներին տալ հետևյալ հարցերը.

1. Ո՞ր թվերն են կոչվում երկնիշ թվեր:

- 2. Ի՞նչ կարգեր է պարունակում երկնիշ թիվը:
- 3. Ինչպե՞ս են կոչվում գումարման գործողության բաղադրիչները:
- 4. Ինչպե՞ս են կոչվում հանման գործողության բաղադրիչները:
- 5. Ո՞րն է ամենափոքր երկնիշ թիվը:
- 6. Ո՞րն է ամենամեծ երկնիշ թիվը:

Նոր նյութի հաղորդումն ուղեկցվում է սլայդների ցուցադրումով:

Ցուցադրվում է երկնիշ թվերի գումարման (առանց կարգային անցման) կանոնը:

Ցուցադրվում է 34 և 25 թվերի գումարման գործողությունը այդ կանոնի կիրառմամբ:

Ցուցադրվում են երկնիշ թվերի գումարման վերաբերյալ առաջադրանքներ: Խմբերին բաժանվում են քարտեր, որոնց վրա գրված են այդ առաջադրանքները:

ՀԱՇՎԵ՝Ք ԳՈՒՄԱՐԸ.

26+42, 16+43, 25+34, 44+33

Լուծման համար նրանց ժամանակ է տրվում: Այդ ընթացքում պետք է պարբերաբար մոտենալ խմբերին, հետևել առաջադրանքի կատարման ընթացքին: Այն խումբը, որն առաջինն է ավարտում աշխատանքը, ներկայացնում է իր ստացած պատասխանները: Այնուհետև էկրանին ցուցադրվում են ճիշտ պատասխանները:

Ցուցադրվում է երկնիշ թվերի հանման (առանց կարգային անցման) կանոնը:

Ցուցադրվում է 74 և 23 թվերի հանման գործողությունը այդ կանոնի կիրառմամբ:

Ցուցադրվում են երկնիշ թվերի հանման վերաբերյալ առաջադրանքներ: Խմբերին բաժանվում են քարտեր, որոնց վրա գրված են այդ առաջադրանքները:

ՀԱՇՎԵ՝Ք ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

56-42, 98-43, 79-39, 88-33

Այս անգամ ևս լուծման համար ժամանակ է տրվում: Այն խումբը, որն առաջինն է ավարտում աշխատանքը, ներկայացնում է իր ստացած պատասխանները: Այնուհետև ներկայացվում են ճիշտ պատասխանները:

Էկրանին բացվում են ճիշտ պատասխանները:
Ցուցադրվում է երկնիշ թվերը սյունակով գումարելու և հանելու կանոնը, ինչպես նաև 74 ու 23 թվերի գումարման և հանման գործողությունների կատարումը այդ կանոնի կիրառմամբ:

Ցուցադրվում են երկնիշ թվերի գումարման և հանման վերաբերյալ առաջադրանքներ, որոնք պետք է կատարվեն սյունակով գումարման և հանման հաշվեկանոնների կիրառմամբ: Խմբերին դարձյալ բաժանվում են քարտեր, որոնց վրա գրված են այդ առաջադրանքները:
37+ 42, 54 + 25, 64-41, 88-68

Այս անգամ ևս լուծման համար տրվում է ժամանակ: Այն խումբը, որն առաջինն է ավարտում աշխատանքը, ներկայացնում է իր ստացած պատասխանները: Այնուհետև դարձյալ էկրանին բացվում են ճիշտ պատասխանները:

ԽՆԴԻԻ ԼՈՒԾՈՒՄ

Ցուցադրվում է խնդիր, օրինակ՝ հաշվել եռանկյան պարագիծը:

Հաշվե՛ք պարագիծը:



Ցուցադրվում է խնդրի լուծումը:

2. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կատարել անդրադարձ, ամփոփել դասը և անցնել գնահատմանը:

Գնահատելիս հաշվի առնել, թե ով ավելի արագ ընկալեց նոր նյութը, խմբային աշխատանքի ժամանակ օգնեց իր ընկերներին և սովորեցրեց նրանց, եղավ ավելի նախաձեռնող, ուղղորդեց խմբի գործունեությունն ու ցուցաբերեց ակտիվ մասնակցություն:

Տնային աշխատանք՝ ԴԱՍ 54. Կատարել № 312 բ, 313 բ, 314 բ 315 ա

առաջադրանքները:

Եզրակացություն

Այսօր հայ ժողովրդի առջև ծառայած խնդիրներից և այդ վիճակից դուրս գալու միակ ճանապարհը որակյալ կրթություն ունենալն է: Ակնհայտ է, որ ժամանակի ընթացքում արված հայտնագործությունները, տեխնիկական և գիտական ձեռքբերումները բավարար չեն միջազգային կրթական համակարգերին ինտեգրվելու համար:

Մարդու պատրաստվածության մակարդակն ու անհատական որակները որոշելու համար գնահատում են՝ չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացումը, սովորձը գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները,

մտավոր գործունեության մակարդակը կամ արժեքային համակարգը:

Հանրապետության պետական չափորոշիչով հանրակրթության համակարգում գիտելիքների, կարողությունների ու հմտությունների, գնահատման գործընթացի բարեփոխումներ մտցվեցին :

Կրթության նպատակները, բովանդակությունը, մեթոդները, իրականացումը և գնահատումը փոխկապակցված են: Դրանց կարգավորման հիմքում ընկած գնահատման ճիշտ ռազմավարության ընտրությունը հետադարձ ազդեցությամբ պետք է խթանի կրթական ողջ համակարգի շարունակական զարգացումը:

Հետազոտական աշխատանք եմ տարել աշակերտների, ծնողների և ուսուցիչների հետ.

- աշակերտների համոզմամբ 1, 2, 3 միավորները թեև բավարար չեն համարվում, բայց աշակերտին հնարավորություն են տալիս դասարանից դասարան տեղափոխվելուն,
- ծնողների կարծիքով այդ միավորներն ունեցող աշակերտները հնարավորություն ունեն շարունակել ուսումը նոր ուղիներ փնտրելով և հարթելով,
- ուսուցիչների կարծիքով 1, 2, 3 միավոր ունեցող աշակերտների հետ պետք է աշխատի խումբ,

- կազմվեն ԱՌՈՒ-ներ, մշակվեն մեթոդներ, հնարներ աշակերտին բավարար գնահատականի հասցնելու համար:

Գնահատման համակարգի մասին խոսելիս չի կարելի չանդրադառնալ այն հարցին, որ ամբողջ հանրապետության տարածքում տարբեր դպրոցների կրթության կազմակերպման միջավայրերն ու հնարավորությունները խիստ տարբեր են, մինչդեռ գնահատման համակարգը նույնն է:

Արդյունքում, միևնույն միավորով գնահատվում են տարբեր առաջադիմությամբ աշակերտներ և գնահատականը չի կարող կատարել սովորողին համակողմանի բնութագրելու իր գործառույթը, որն այնքան կարևոր է սովորողի ուսումնական նվաճումների ճշգրիտ գնահատման, ամենատարբեր նպատակներով ընտրության օբյեկտիվություն ապահովելու համար:

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

